ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4249-Ա « 31 » օգոստոսի 2026 թ.

ՆՈՐՔԻ ԱՅԳԻՆԵՐ Հ.181/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ
ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Բելլա Իկոնոմովայի դիմումը՝ Նորքի Այգիներ հ.181/2 հասցեում գտնվող հողամասի սահմանները ճշտելու և հատակագիծ թողարկելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.10022021-01-0320 վկայականը, ՀՀ կադաստրի կոմիտեի հ.ԱՏ-26052026-01-0657 և հ.ԱՏ-26062026-01-1410 տեղեկանքները և Նորքի Այգիներ հ.181 հասցեի սեփականատիրոջ իրավահաջորդների կողմից 22.05.2026թ. տրված հայտարարությունները:

«Երևաննախագիծ» ՓԲ ընկերության կողմից 09.04.2026թ. իրականացված տարածքի տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Նորքի Այգիներ հ.181/2 հասցեում գտնվող հողամասի փաստացի /մասնակի ուրվագծային փոփոխությունով/ մակերեսը կազմում է 3760.0քմ, որքան ամրագրված է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.10022021-01-0320 վկայականում:

Քննարկվող հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում, Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ գտնվում է բնակավայրերի նպատակային նշանակության հողերի բնակելի կառուցապատման գոտում, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 5-րդ գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից 17.07.2026թ. տրամադրված Ն/46629-26 եզրակացությունը.

1.Սահմանել, որ Նորքի Այգիներ հ.181/2 հասցեում գտնվող հողամասի մակերեսը կազմում է 3760.0քմ, որի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2.Ընդունել ի գիտություն, որ սույն որոշումը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3.Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5.Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ